ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
e-mail:arpik.karapetyan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

03 դեկտեմբերի 2014 թվականի 13-Ն

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 Թ _ Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼՈՎ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ » ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Մասիս համայնքի 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :

կողմ - 7, ձեռնպահ – 0 , դեմ – 0

Ավագանու անդամներ

Գ.Մելքոնյան կողմ

Գ.Ղազարյան կողմ

Վ.Օհանյան կողմ

Գ.Խաչատրյան կողմ

Կ.Մարգարյան կողմ

Ս.Սարգսյան կողմ

Ն.Մխիթարյան կողմ

Համայնքի ղեկավար Ս.Մարգարյան

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2014թ -Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան նոր շենքերի,շինությունների(ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային տների) , ինչպես նաև մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ:

2) սույն կետի « 1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա) 201 –ից մինչև 5000քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 30000 դրամ
բ) 501 – ից մինչև 1000 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 50000 դրամ
գ) 1001 և ավելի քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 70000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների
տեղադրման համար

3) մինչև 20 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 3000 դրամ

4) 20 և ավելի քառ. մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 5000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի համար) , եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1) չի նախատեսվում կցակառույցների ,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ՝ 3000 դրամ:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի ,շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝ 5000 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի թույլտվության համար , հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում , յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ 5000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում , յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ 5000 դրամ:

5. Համայնքի տարածքում ՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար , յուրաքանչյուր մեկ օրվա համար 1 քառ/մ համար 0- 350 դրամ :

2) հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝ 150000 դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները հանրային սննդի օբյեկտները , բաղնիքները (սաունաները) , զվարճանքի օբյեկտները ժամը 24 .00 –ից հետո աշխատելու թույլտվություն ընթացիկ տարվա համար սահմանվում է ՝

1) առևտրի օբյեկտների համար ՝ 25000 դրամ
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար ՝ 60000
3) բաղնիքների , սաունաների համար՝ 300000 դրամ
4) խաղատների համար ՝ 700000 դրամ
5) շահումներով խաղերի կազամակերպման համար ՝ 300000 դրամ
6) վիճակախաղերի կազմակերպման համար ՝ 100000 դրամ

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանվում է ընթացիկ տարվա համար ՝ 2000 դրամ:

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 1000 դրամ :

2. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխելու , վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական և տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 5000 դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կախված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից՝ 1000 դրամ :

4.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար՝ յուրաքանչյուր շնչի համար ամսեկան 10 դրամ:

Սույն որոշման 1,2,3 կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը :

Համայնքի ղեկավար՝ Ս.Մարգարյան